ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«*16*» *դեկտեմբերի 2022թ.* *N 589-Մ*

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 780-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 3-րդ բաժնի 15-րդ կետի 4-րդ ենթակետը և հաշվի առնելով գազամատակարարման վերականգնումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Արցախի Հանրապետության նախադպրոցական, հանրակրթական, արտադպրոցական (երաժշտական և արվեստի դպրոցներ, մարզադպրոցներ և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ), նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բաձրագույն ուսումնական հաստատություններում, որտեղ ուսումնական գործընթացը դեկտեմբերի 14-ից դադարեցված էր, 2022 թվականի դեկտեմբերի 19-ից վերսկսել ուսումնական գործընթացը:
2. Ուսումնական գործընթացը դադարեցված ուսումնական հաստատություններում դեկտեմբերի 14-16-ը բաց թողնված պարապմունքները կազմակերպել 2022 թվականի դեկտեմբերի 26-28-ը ընկած ժամանակահատվածում, իսկ 6-օրյա ռեժիմով աշխատող ուսումնական հաստատություններում դեկտեմբերի 17-ի բաց թողնված դասաժամերը կազմակերպել՝ բաշխելով դեկտեմբերի 19-24-ը ընկած ժամանակահատվածում:
3. Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնին՝ սույն հրամանը առաքել Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին և Ստեփանակերտի քաղաքապետին:
4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Միքայել Համբարձումյանին:

ժամանակավոր պաշտոնակատար ***Հ. Մինասյան***